

—Յոճնիսի 10-ին, մուսուլմանների պատգամաւորութիւնը ներկայանալով Կովկասի Փոխարքային տուել է մի խնդրագիր, ուր ի միջի այլոց ասուած է.

«Զերդ Պայծառափայլութիւն.

Վերե առաջ բերած հարցերից իւրաքանչիւրը, ինչպէս և մասնադաւաններէ միւս կարիքները, որոնց մասին չէ խօսուում այստեղ, էական մեծ նշանակութիւն ունենալով երկրի համար, մեղանից կը պահանջէր մանրամասն դրաւոր զեկուցումն, սակայն աչքի առաջ ունենալով Կովկասում կաւարուող տեւոր անցքերը, անհրաժեշտ ենք համարում դեռ բաւականաւաւ միայն մասնադաւաններէ անյետաձգելի կարիքները թուելով, որոնց մասնաւորապէս քննելը մասնադաւաններէ ներկայացուցիչներէ հետ միասին տեղի կ'ունենայ այն խորհրդակցութեան մէջ, որ պէտք է հաւաքուի, ինչպէս ծանուցեց ազգաբնակութեան ձերդ պայծառափայլութիւնը՝ Կովկաս ուս դընելիս: Իսկ այժմ մենք անկարող ենք չխօսել այդ անցքերէ մասին, մասնաւորապէս այն բանից յետոյ, որ ձերդ պայծառափայլութիւնը մի քանի օր առաջ լսեց հայ պատգամաւորութեան դրաւոր զեկուցումը նոյն այդ անցքերէ մասին և որը հրատարակուեց տեղական մամուլում:

«Անկարելի համարելով համաձայնել եզրակացութիւններէ շատերի հետ, որոնց համոզում են հայոց ներկայացուցիչները՝ նպատակի և կատարուող անցքերի ընտրութեան վերաբերեալ, ինչպէս նաև այն միջոցներէ, որոնց օգնութեամբ կատարուում են այդ անցքերը, մենք, սրտանց ցաւելով երկրի անդորութեան լռանգարման հաժար և մասնաւորապէս անմեղ մարդկանց թափուած արեան համար, ամենից առաջ անհիմն ենք համարում այն պնդումը, որպէս թէ մասնադաւան մասսայի մէջ այն համոզմունքն է կազմուել, թէ այժմեան տեղի ունեցող յարձակումներն ու սպանութիւնները համապատասխանում են կառավարութեան ղեկավարութիւններին: Թէ ինչպէս է դործում տեղական վարչութիւնը, յայտնի է ձերդ պայծառափայլութեան, ըստ մասնադաւանները՝ դիտակցելով վտանգը, որ սպառնում է ամբողջ երկրին մարդկանց կազմակերպուած գործողութիւններէ, որոնք չեն արհամարհում ոչ մի միջոց, ի թիւս որոց նաև ռուսները, — դրոսած են պաշտպանուողների և պաշտպանողների զրուցեան մէջ: Յետոյ մեզ թոյլ ենք տալիս բողոքելու այդ անցքերի այն սխալ լուսաբանութեան դէմ, որ, ակնհերկ միակ նպատակի է ձգտում — վարկաբեկ անել մասնադաւաններին կառավարութեան, հասարակութեան և մամուլի աչքում: Բազուի դժբաղդ անցքերից սկսած չեն դադարում այն ռիստեմաւական յարձակումները՝ Կովկասի մասնադաւաններէ վրայ, որոնց են համարում անարդարացի կերպով ներկայ դէպքերի պատասխանատուն: Ամեն օր մայրաքաղաքի և տեղական մամուլում լոյս են տեսնում ակնյայտի միտումաւոր հեռադրական և ուրիշ հաղորդագրութիւններ, որոնց զօրութեամբ հէնց ամեն տեղ էլ — Բագում, Նախիջևանում և Նրեանում, քաղաքներում և գաւառներում յարձակում են, սպանում, թալանում միայն և միմիայն մասնադաւանները, որոնք, ըստ այդ տեսակ հաղորդագրութիւններէ, յանուն համալսմութեան գաղափարի սրբազան պատերազմ են յայտարարել, բռնի կերպով իրանց կրօնին դարձնում հայերին, նպատակ են դրել բոլորովին ջնջել հայերին, և այլն և այլն: Եւ այդպիսի գրգռիչ ընտրութիւն ունեցող հեռադրութիւնները թուում են թիֆլիսի մայրաքաղաքի լրագիրներին հոգեկոտկանների և ինտելիգենտ անձանց ստորագրութեամբ, Եթէ Բագուի դէպքերի ժամանակ մասնադաւաններին ցոյց են տալիս որպէս կոյր գործիք, որով օգտուեցին տեղական իշ-

խանութիւնները, այն ժամանակ Երեանի նահանգում մահմեդականները, եթէ հաւատանք այդպիսի հազորդազրութիւններ տարածողներին, գործնական մասնակցութիւն են ունենում միեւնոյն իշխանութիւնների ծրագիրներին մէջ... Միայն մահմեդականները զէնք ունեն, միայն մահմեդականներն են յարձակւում անխայ կոտորելով կանանց և երեխաներին, ծեղերին... Մէջ խօսքով՝ մենակ մահմեդականներն են ամեն բան անում, մերթսում քրիստոնեաներին, սրբապղծում քրիստոնէական սրբութիւնները... Եւ այդ բոլոր սարսափները որոնք կատարւում են որպէս թէ միմիայն իսլամ դաւանողների ձեռքով, հասկանալի է, որ պատճառ են դառնում միւս քրիստոնեաների զայրանալուն, դժգոհութեան Կովկասի մահմեդականների դէմ, որոնք, շնորհիւ իսլամի մօտին կազմուած աննպաստ հայեացքի, առանց այդ էլ ներկայանում են օտար տարրեր:

Մահմեդականների հասցէին առատօրէն այդպիսի մեղադրանքներ տարածողները, կանգ չեն առնում ոչ մի սարսափի առաջ, որ կատարուել և կատարւում են մահմեդականների վրայ. նրանց չէ կանգնեցնում անօգնական մահմեդական համայնքի տասնեակ դիակները, որ գտնուել էին Բագուի փողոցներում, նրանց համար նշանակութիւն չուեն մահմեդականների հրդեհուած ու թալանուած տները այդ նոյն Բագուում. նրանք իրանց կուրուքեան մէջ մտնում են, որ դեռ չեն սառել Նախիջևանի մահմեդականների դիակները որոնք գնդակահարուել էին երեկոյեան աղօթքը կատարելու միջոցին, և սրտանց ցանկանալով մահմեդականներին արատաւելի ամեն բանի մէջ, չեն կամենում խոստովանուել, որ Երեանի դէպքերը, որոնք կազմակերպուած բնոյթ էին կրում, մահմեդականները չեն սկսել ու կատարել. նրանք չեն կոտորել ծերունիներին, կանանց ու մանուկներին, անպատուել թրքուհիներին, հրդեհել տները: Եթէ ոչ պէտք է ենթադրել, որ մահմեդականները իրանք իրանց սպանելով, Բագուում հրացան էին արձակում յարգուած սէրդներին վրայ, իսկ Երեանում այրել են նախկին շէյու-խալիսի տունը, կամ թէ Երեանում մահմեդականները հինգ օր շարունակ պաշարուած գրութեան մէջ էին պահում իրանք իրանց և մինչև իսկ առմեր օգնութեան էին դիմում:

Կանգ չառնենք մի ամբողջ շարք փաստերի վրայ, որոնք հաստատում են, որ այդ բոլոր անցքերի մէջ մեղաւորը մահմեդականները չեն, որ այդ անցքերը միակերպ ամօթաբեր են երկու ազգաբնակչութեան համար ևս, և որ, ընդհակառակը, Բագուում, Նախիջևանում և Երեանում կոտորածին առիթ տուողները մահմեդականները չեն եղել, այդ դժբաղդ դէպքերի մէջ մահմեդականները պաշտպանուել են միայն կազմակերպուած յարձակումների դէմ, որոնք տեղի էին ունենում ոչ միայն խնչալիների հարուածներով ու բերդաններ արձակելով, բայց և բռնկող առամբերով, որի ժամանակ, ինչպէս ցոյց են առնիս փաստերը, զէնք և ուրիշ միջոցներ մեծ չափով ունեցողները մահմեդականները չեն եղել, որոնք շատ վաղուց է, որ զինաթափ են եղած, իսկ զէնք և այլ բաներ ձեռք բերելու և առմերբ ունենալու համար պէտք է առանձին դրամագլուխներ ունենալ, որ նոյնպէս չուեն մահմեդականները. վերջապէս մահմեդականները չեն, որ որոշեալ նպատակների են ձգտում, որոնցից ամենակորստաբերն է՝ ախրապետող լինել ուրիշների վրայ, հոգեորապէս և տնտեսականապէս ընկճել նրանց:

Վնովկասի մահմեդականները՝ իրանց իրաւազուրկ գրութեան շնորհիւ զրկուած լինելով անհրաժեշտ կրթական ու տնտեսական միջոցներից դէպի առաջադիմութիւն, — անխուսափելի կերպով նրանք պէտք է ետ մնային իրանց դրացիներից, որոնք միայն, որպէս քրիստոնեաների, տուում

էին ամեն տեսակ միջոցներ՝ իրանց ազգային և տնտեսական զարգացման համար, ուստի և մասնագիտականը Միացին այն աննախանձելի կացութեան մէջ, որի մէջ և զանաւում են այժմ։ Մասնագիտականներն վերաբերեալ ունեցած անարդարութեան շնորհիւ, որի մասին խօսուեց վերև և որ պայմանաւորուած էր միայն կրօնի տարբերութեամբ, Կովկասի մասնագիտականներ պէտք է զիջէին դրացի քրիստոնեաներին առևտրի մէջ, արդիւնաբերութեան ու տեխնիքական պարագայունքների մէջ՝ սակայն նրանք՝ մասնագիտականները պահպանել են անձեռնմխելի կերպով իրանց բնական զբամազլիի առհաստիցը և հողու այնպիսի թանկագին յատկութիւններ, ինչպէս են շիտակութիւնը, անկեղծութիւնը, բարեխղճութիւնը և սէր դէպի անդորր կեանքն ու աշխատանքը։ Ձգտելով բացառութիւն կազմել ոչ մի բանի մէջ կամ գերելիս զրացիներին վրայ, մասնագիտականները ծարաւի են իրանց հոգեւոր-բարոյական և տնտեսական ոյժերի խաղաղ զարգացման, ցանկանալով նոյնը նաև իրանց դրացիներին։ Իրանց այդպիսի բնական ձգտման մէջ նրանք հաւատով և յուսով են նայում ապագայի վրայ, լիովին համոզուած, որ Կովկասը ձեր վարչութեամբ նշանաւոր կը հանդիսանայ այն բանով, որ մասնագիտականներ ձեռք կը բերեն կառավարութեան այն վստահութիւնը, ինչպիսին որ վայելում էին յիշատակի արժանի Կովկասի առաջին Փոխարքայի օրով։ Այդ նպատակների մէջ, որ յատուկ է իրանց շիտակութեան և անկեղծութեան, մասնագիտականները պատրաստակամութիւն են յայտնում ընդունելու այն բոլոր միջոցները, որոնց նպատակն է երկրի անդորրութիւնն ու խաղաղութիւնը վերականգնել։

Ամենալճառական միջոցներ ձեռք առնելով դժբաղդ անցքերի իսկական յանցաւորներին և նրանց զրդողների դէմ, ակնյայտին միտումաւոր ու զգրիչ բնաւորութեամբ սուտ տեղեկութիւնները անամօթաբար տարածողների և ոչ-օրինական կոմիտէաների դէմ, որոնք ողջ երկրը տերութիւն են ենթարկել, մինք համոզուած ենք, որ կը հանգստացնէ երկրի ազգաբնակչութիւնը և այդպիսով միջոց կը տաք շտապեցնելու Կովկասի համար ցանկալի ժամի գալը, երբ Ձերդ Պայծառափայլութիւնը կը ձեռնարկէք բեֆորմներին, որոնց նպատակն է, ինչպէս որ արդէն յայտնել էք դուք, երկրի մէջ քաղաքացիութեան և Կովկասի բոլոր ժողովուրդների բարօրութեան զարգացումը, որոնց թոււմ նաև Կովկասի մասնագիտականներն։

Ահա այդ ժամանակ Ձերդ պայծառափայլութեան համար աւելի ևս պարզ կը լինի մասնագիտականների այն զբաղիչ բարոյական դէմքը, որ, ինչպէս դուք բարեհաճեցիք ստել մասնագիտական պատգամաւորութեան Մ. Պետերբուրգում մարտի 25-ի ընդունելութեան ժամանակ, լաւ յայտնի է ձեզ։

Թէ որչափ հեռու են ճշմարտութիւնից այն բոլոր ակնարկները որ արուած են և յեղաշրջուած փաստերը այս գրութեան մէջ, հայերի վրայ գցելու համար վերջին դժբաղդ դէպքերի ամբողջ պատասխանատուութիւնը, այդ իհարկէ գիտէ իւրաքանչիւր ոք, որ հետեւի է ջարդերի սկզբնաւորութեան։ Ինչ վերաբերում է թուրք ժողովրդի տնտեսական ճնշուած դրութեան՝ յամենայն դէպս ոչ Բագում, ոչ Նախիջևանի գաւառում հայի դրամական և կալուածական հարստութիւնը չի կարող համեմատուել թուրքերի ունեցածների հետ. հիւս յայտնի է որ թուրք միլիոնատէրերը, տնատէրերը և կալուածատէրերը կազմում են այդ տեղերում ճնշող մեծամասնութիւն։

—Յունիսի 23, 24 և 25-ին Թիֆլիսի դանազան մասերում նետեցին 5 ուռմբ։ Նրանցից մի քանիսը պայթեցին, որից ֆլասուեցին մի քանի անձեր։ Յունիսի 23-ի երեկոյեան ժամը 9-ին մի անյայտ մարդ Արտիլերիական հրապարակի վրա մի պետարզա նետեց, որի պայթիւնից թեթեւ վէրքեր ստացան երկու երեխաներ։ Երբ աղմուկի վրա դուրս վազեցին այդտեղ բնակուող պօլտավեան գնդի կազակները, նրանց մէջ նետեցին մի ձեռքի ուռմբ, որն ընկաւ ցեխի մէջ և չպայթեց։ Հետեւեալ օրը ժամը 6 $\frac{1}{2}$ -ին երեկոյեան ուռմբ նետուեց Սալդատսկի բազարի և Դրաֆսկի փողոցի անկիւնում գտնուող երկրորդ յարկի դատարկ տան լուսամուտից, ուր առաջ գինետուն էր։ Ռուսները պայթեց այդտեղ կանգնած կազակների պահակի մօտ, և պատահականօրէն կանգնած կազակներից մէկին, մի կողմ շարտեց միւս կազակին—Նիկոլայ Բելիխին, որը ծանր վէրքեր ստացաւ գլխին, մէջքին և ոտերին։ Այդ կազակը յունիսի լոյս 25-ի գիշերը մեռաւ Միքայէլեան հիւանդանոցում։ Բացի դրանից փորի վրայ վտանգաւոր վէրք ստացաւ այդ տեղով անցնող մի մշակ՝ Բաբա Թէրազովը և թեթեւ վէրքեր ստացան Վասիլիյ Սալամատին և Պրոկոֆիյ Միկէեւ զոնապանները։ Վնասուածները բուժուում են Միքայէլեան հիւանդանոցում, իսկ Միկէեւը հետեւաւ օրը դուրս եկաւ։ Բացի դրանից սպանուեց և մի կազակի ձի։ Կազակները կրակ բաց արին ուռմբ նետող անյայտ անձերի վրայ, որոնք դատարկ տան կողմը բարձրացան և ուզում էին թռչել միւս շէնքերի կողմնները և փախչել։ Ոստիկանութիւնը բռնեց նրանց։ Նոյն օրը երեկոյեան 8 $\frac{1}{2}$ -ին երկրորդ ուռմբը նետուեց Թուրքի մէյդանի և Վորոնցովի փողոցի անկիւնում, ուր կանգնած էին Վլադաքամասի պրիստա Գլեբովը, նրա օգնական Մորգանովսկին, օկոլտոսչնի վերակացու Չիքովսիձէն և մի գորողովոյ։ Գլեբովը թեթեւ վէրք ստացաւ ուռմբի կտորներից կրճքի փափուկ մասերում (նա առողջանում է)։ պրիստաւի օգնական Մորգանովսկին մի կողմ շարտուեց և մի թեթեւ վէրք ստացաւ թեթեւ վայր ընկնելու։ Չիքովսիձէն ծանր վէրք ստացաւ ոտին (սխալ է այն լուրը, որ նա մեռել է)։ Բացի դրանից՝ ֆլասուեցին և կողմնակի անձեր։ Նաւթիկեան վաճառականը, որ ուրիշների հետ միասին հանրակառքով կիրադառնում էր Կրծանիսից, կողքին վէրք ստացաւ—ճնճխուել է կողը։ Նոյն երեկոյեան գեթադդից հանեցին 25 կտոր ոսկորներ։ Ֆնատակար կոտորատուներ են եղել ոսկորների մէջ։ Նրա կեանքը վտանգի մէջ է։ Հանրակառքի մնացած ճամբորդներն անվտանգ մնացին։ Թեթեւ վիրաւորուել է այդ ժամանակ անցնող Միքայէլ Թորոսեան կօշկակարը, իսկ մի ուրիշ

անցորդ՝ Սերգէյ Կիկնաձէ ծանր վէրք ստացաւ ազգրի վրայ։ Պայթիւնի տեղից ոչ շատ հեռու դռնուեց քարվանսարայում թագնուած, մէջքին, թոքերին և լեարդին ծանր վէրք ստացած մի երեխայ—Պետրոս Շախրատեան, որը մեռաւ հիւանդանոցում նոյն գիշերը և եթէ Նոյն երեկոյեան երրորդ ուռմբը նետուեց Հաւլաբարում, բայց նա չպայթեց։ Շաբաթ, յունիսի 25-ին, երեկոյեան ժամը 6¹/₂-ին, Հաւլաբարում մի անյայտ անձ՝ երկու անգամ ատրճանակ արձակեց Կախէթեան հրապարակում կանգնած Vll քաղաքամասի օկոլտոռչնի վերակացու Իլինի վրայ, մէջքից 2 ծանր վէրք հասցնելով նրան։ Կազակը հասաւ այդ մարդու ետեից և սրով կտրեց նրա գլուխը։ Այդ նկատելով, Հաւլաբարի բնակիչներն սկսեցին աների կտուրներէ կրակ անել կազակների վրայ։ Կազակները նրանց պատասխանեցին հրացանի կրակներով. 23 անգամ կրակ արին։ Այդ հրաձգութեան ժամանակ տեղն ու տեղն սպանուեց պատշգամբ դուռն եկած օրիորդ Օ. Դ. Իշխանեանը, որ աւարտել էր բժշկական կուրսերը և պետական քննութիւններին էր պատրաստուում։ Մի քանի հոգի թեթեւ վէրք ստացան, իսկ Միքայէլեան հիւանդանոց ուղարկուած է աիլին Զաբարիձէն, որ ծանր վէրք է ստացել փորին և Գոգինաշվիլի անունով մէկը՝ կողքից վիրաւորուած։ Նոյն օրը երեկոյեան ժամը 9-ին ուռմբ նետուեց Օլգինսկի փողոցում, Մոսկովսկի համարների մօտերը։ Վիրաւորուեցին—Սիմէոն Ալանովերէկով աջ ոտից, Վէնէդիկտ Մելինարսկին—ոտից, Ասլան Մահմուդ-օղլի՝ գլխից և զանազան մասերից (մեռաւ 26-ի գիշերը), դնապան Վասիլի Անտոնովը (ոտերը ճնճխուել էին. մեռաւ նոյն գիշերը)։ Պաւել Լեբեդին՝ ձախ ոտից, Աւգուստինա Օկոնովա—ձախ ոտից, կամաւոր զինուոր Օկոնով—աջ ուսից, Օկոնովա փոքրիկ աղջիկը—աննշան վէրքեր մէջքին, Դմիտրի Միխայլով—ոտից և մէջքից և Դաւիդ Գիլաշվիլի—փորից և ուսից։ Բացի զրանից շատերը բերձուածքներ ստացան ուռմբի կտորներից և տուն գնացին, չգիմելով հիւանդանոցի օգնութեանը։ (КАВКАЗЪ)

—Յուլիսի 27-ի Բարձրագոյն ուկազով Թագաւոր Կայսրը բարեհաճեց անհրաժեշտ համարել.

2) Պատերազմական վիճակում հրատարակել Թիֆլիս քաղաքը և Թիֆլիսի գաւառը, տարածելով նրանց վրայ պատերազմական դրութեան մէջ հրատարակուած վայրերի կանոնների և օրէնքների ոյժը.

2) Տալ Փոխարքային այդ վայրերի վերաբերմամբ այն իրաւունքները, ինչ որ ունեն պատերազմական դրութեան մէջ յայտարարուած տեղերի զինուորական գլխաւորները և պետա-

կան կարգն ու հասարակական հանգստութիւնը պահպանելու վերաբերութեամբ վարչական օրգանները ունեցած իրաւունքները, և

3) Թոյլատրել ֆոխարքային յանձնելու այդ կանոնների 19-դ յօդուածի տուած զխաղօրութիւնները այդ բանի համար յատկապէս նշանակուած մի անձի, այն պայմանով, որ ֆոխարքան կարողանայ փոփոխել նրա կարգադրութիւնները պետական կարգի և հասարակական խաղաղութեան վերաբերմամբ:

Այդ Բարձրագոյն հրամանի մասին յայտարարելով ի տեղեկութիւն և ի գործադրութիւն ֆոխարքան առաջարկում է Կովկասեան Վոյսկային հրամանատար գեներալ-լէյտենանտ Երանկովիչին անյապաղ ստանձնել Թիֆլիս քաղաքի և Թիֆլիսի գաւառի գեներալ-նահանգապետի պաշտօնը:

— Ամենայն Հայոց Կաթողիկոսը Յունիսի 23-ին ժամանելով Թիֆլիս, յունիսի 25-ին ներկայացաւ ֆոխարքային և կոմսուշոնու Կոմսը ունկնդրութեան ժամանակ յայտնեց, որ Նորին Կայսերական Մեծութեան 1903 թ. դեկտեմբերի 12-ին Նորին Վեհափառութեան կողմից ներկայացրած աղերսագրում յարուցուած խնդիրները յոյս ունի որ կը լուծուեն նպաստաւոր կերպով:

— Յունիսի 5-ին Վեհափառ Հայրապետի յանձնարարութեամբ ներկայացաւ ֆոխարքային Ղարաբաղի առաջնորդ Աշոտ եպիսկոպոսը և խնդրեց միջնորդել Թագաւոր Կայսեր առաջ Շուշուայ թեմական դպրոցի վերաբացման համար, որ բարձրագոյն հրամանով երկու տարի առաջ փակուել էր: Փոխարքան խոստացաւ առաջնորդի խնդրին ընթացք տալ:

— Բագուի աղէտի առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսից հաստատուած յանձնաժողովին տուած կոնդակով Նորին Վեհափառութիւնը հրաւիրում է շարունակել գործունէութիւնը և Երևանի նահանգում տեղի ունեցած անկարգութիւնների պատճառով դժբաղդացածներին օգնութիւն հասցնելով: Այդ յանձնաժողովի անդամներից մէկը՝ գիւղատնտես Ա. Սահակեան, իշխանութեան համաձայնութեամբ ուղարկւում է աղէտի տեղը, գիւղացիներին ամենալայն չափով գիւղատնտեսական օգնութիւն հասցնելու նպատակով: